



4219 ալ.
46020-ի հետ

~~1/6~~
~~VII-546~~

~~25779~~

~~III~~
~~II~~
~~42~~

~~1254~~

~~2~~
~~73~~



WIK
1868

ՆԵՐՍԷՍ Ե

ՎԵՀՍՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1843—1857.



ՆԵՐՍԷՍ Ե, իբրեւ կաթողիկոս, այն չնաշխարհիկ հայրապետներէն մէկն էր, որ իւրեանց եռանդուն ազգասիրութեամբը, նախանձելի սրբակեցութեամբը, խոհական կառավարութեամբն ու նշանաւոր գործունէութեամբը անմահացուցած են իւրեանց անունները. իբրեւ երեւելի անձններկայ իննեւտասներորդ դարուս, այն մարդիկներէն մէկն էր, որ իւրեանց բարակ քաղաքականութեամբը, անձնանուէր հայրենասիրութեամբը, արթուն բնասորութեամբն ու նուրբ հեռատեսութեամբը յաւերժական յիշատակներով փառաւորուած են. եւ իբրեւ Հայ, այն զիւցազանց մէկն էր, որ պատերազմի ժամանակ ախոյեան հանդիսացան հայրենեաց աշխարհին մէջ, եւ նորա բարօրութեանն ու ազատութեանը մինչեւ ի մահ պաշտպան կեցան, եւ խաղաղութեան ժամանակ՝ իւրեանց անխոնջ աշխատութեամբը ազգիս բարոյական յառաջադիմութեան հիմունքը ձգելով՝ նորա ուսումնական դաստիարակութեան վերայ փոյթ ու խնամք ունեցան:

Այս մեծահռչակ կաթողիկոսը ծնած է 1771 թուականի փետրուարի 13-ին Սշարակ գիւղին մէջ, որ ժամանակով Հայաստանի Արարատեան նահանգի Բագրեւանդ գաւառի նշանաւոր տեղերէն մէկն էր, եւ 20 վերստ հեռաւորութիւն ունի Ս. Էջմիածնի մայր եկեղեցիէն: Իւր ծագումը Կամսարական—Շահազիզեանց ազնուական հին տոհմէն էր, որ մինչեւ ցայժմ Հայաստանի եւ Վրաստանի մէջ մեծանուն ցեղերէն մէկն է. եւ նորա կենաց առաջին տարիներէն այսքանս զիտեմք, որ մինչեւ հնգետասանամեայ հասակը իւր բարեպաշտ ծնողաց տունը կենալով՝ Աշտարակայ քահանայէն հայերէն գրավարժութիւն կսովորէր. յետոյ իւր ամեցապատիւ կնքահօր, Գալուստ արքեպիսկոպոսի հոգաբարձութեամբը Ս. Էջմիածին գնաց, ուր քիչ ժամանակի մէջ իւր կարգէ դուրս ընդունակութիւնը, ուսումնասիրութիւնն ու հաստատուն բնաւորութիւնը ցուցնելով՝ Գալուստ սրբազանը մասնաւոր խնդիրք արաւ Կոստանդնուպոլսոյ Գրիգոր արքեպիսկոպոսին, որ այն ժամանակը մեծ համբաւ ունէր գիտութեան եւ առաքինութեան կողմանէ, որպէս զի իւր քովն առնու զՆերսէս պատանին, եւ ըստ ներելոյ ժամանակին՝ ուսումնական գիտութեանց մէջ կրթէ: Գրիգոր սրբազանին յօժարակամ սիրով յանձնառութիւնն իմանալէն վերջը՝ Ներսէսը Կոստանդնուպոլիս յուղարկուեցաւ, ուր քանի մի տարուան մէջ աստուածաբանական գիտութեանց հմտանալէն յետոյ Ձմիւռնիա գնաց եւ իւր 23 տարեկան հասակին, այսինքն 1794-ին սեպտեմբերի 24-ին վարդապետ ձեռնադրուեցաւ եւ Էջմիածին վերադարձաւ:

Ներսէս՝ տեղ հասնելուն պէս թէեւ շատ տխրեցաւ Գալուստ արքեպիսկոպոսի մահուան վերայ, որուն երկունք հայր կանուանէն ինքը, բայց Ղուկաս կաթո-

ղիկոսը նորա բնական հանճարն ու ստացական ձիրքը տեսնելով՝ մասնաւոր խնամք ունեցաւ վերան եւ Ներսէս վարդապետին իւր գրագրութեանցը աշխատեցուց:

Նոյն միջոցները Թէքիրտաղցի Սարգիս վարդապետը (որ Բասենցի Յարութիւն արքեպիսկոպոսի ժամանակէն աշակերտակից էր Ղուկասու) Էջմիածին գնալով՝ մէկ համբաւ տարածուեցաւ մեր համազգեաց մէջ, որ իբր թէ Հայոց ազգը Հռովմայ եկեղեցւոյն հետ կուգեն միացընել⁽¹⁾, եւ այնքան երկար տեւեց այս լուրը, որ վերջապէս Տաճկաստանի Հայերէն ոմանք մասնաւոր նամակաւ հարցուցին Էջմիածնի միաբաններէն համբաւին ստուգութիւնը: Կաթողիկոսը լսելուն պէս՝ Ներսէս վարդապետը Տաճկաստան՝ այսինքն Ձմիւռնիա եւ Կոստանդնուպոլիս յուղարկեց իրեն կողմանէ, ուր ազգայնոց մէջ յարուցած վրդովմունքը իւր ճարտար խօսքերովը խաղաղութեան հրեշտակի պէս հանդարտեցընելէն յետոյ՝ Էջմիածին վերադարձաւ:

Ղուկաս եւ Յովսէփ կաթողիկոսներէն վերջը՝ երբ 1802 թուականին Դանիէլը կաթողիկոս նստաւ, Ներսէս վարդապետի եզական յատկութիւնները տեսնելով՝ ծայրագոյն վարդապետութեան գաւազանը տուաւ նորա եւ քիչ ժամանակէն յետոյ եպիսկոպոս ձեռնադրեց ու Վրաստան (Թիֆլիզ) յուղարկեց, ուր Պարսից եւ Ռուսաց մէջ բոլրբոքած պատերազմի բոլոր ժամանակը ախոյեան հանդիսանալով՝ իւր ազգի բարօրութեանը աշխատեցաւ:

(1) Այս համբաւոյն վերայ Հայերը Թէքիրտաղցի Սարգիս վարդապետին հետ այնքան թշնամացան, որ վերջինս վրացոց Հերակլ քաղաքին ձեռնառուութեամբը հագին կարողացաւ Թիֆլիզ եւ այն տեղէն եւս եւրոպա փախչիլ:

Պատերազմէն յետոյ կաթողիկոսի հրաւիրանօքը՝ Ներսէս եպիսկոպոսն էջմիածին վերադարձաւ եւ Ս. Աթոռոյն գործերն յառաջ տանելու կողմանէ եռանդուն գործակից եղաւ իրեն։ Կաթողիկոսը նորա առ ինքն ունեցած հաւատարմութիւնն ու առ ազգն ունեցած անկեղծ սէրը տեսնելով՝ արքեպիսկոպոսական բարձր աստիճանը տուաւ նմա, եւ քիչ ժամանակէն յանձնարարական թղթերով Տաճկաստանի այլ եւ այլ քաղաքներն յուղարկեց առաքելական պաշտօնիւ, որ հետզհետէ յառաջ երթալով՝ Կոստանդնուպոլիս գնաց, Տաճկաց վէզիրներուն ու սուլթանին հետ տեսնուեցաւ, եւ ամենայն յաջողութեամբ էջմիածին վերադարձաւ, սուլթանի կողմանէ փառաւոր հրովարտակ (*ֆերման*) տանելով կաթողիկոսին։ Նոյն միջոցները, այսինքն 1809 թուականին Ռուսաց եւ Տաճկաց մէջ պատերազմ բացուելով՝ Դանիէլ կաթողիկոսն իւր բացակայութեան պատճառաւ էջմիածնի Ս. Աթոռոյն կառավարութիւնը Ներսիսին յանձնեց, որով ընդարձակ ասպարէզ բացուեցաւ իւր ազգասէր գործունէութեան առաջեւ։

Դանիէլէն յետոյ երբ 1810-ին կաթողիկոսն նստաւ Եփրեմը, Ներսէս ամենայն հաւատարմութեամբ գործակից եղաւ նաեւ նորա բարի բարի ձեռնարկութիւններին, որով այս նոր կաթողիկոսին սէրը եւս արժանապէս վայելելով՝ 1811-ին Վրաստանի առաջնորդ նշանակուեցաւ, եւ յաջորդ տարին, այսինքն 1812-ին յունուարի 9-ին, իբրեւ արժանընտիր հովուապետ, Ռուսաց կայսեր բարձրագոյն հրովարտակին հետ մէկտեղ վեղարին ճակատը կրելու մետրապոլիտական ադամանդեայ խաչն ընդունեցաւ։

Այնուհետեւ Ներսէս Թիֆլիզի մէջ բնակելով՝ եւ Ազգիս այժմու պիտոյքն ու եւրոպական լուսաւորութեան օգուտները պէտք եղածին չափ հասկընալով՝

բոլոր ուժովն ու ջանքովը աշխատեցաւ ոչ միայն իրեն յանձնուած հօտին հոգեւորական կրթութեանը, այլ եւ ընդհանուր ազգին ապագայ բարօրութեանը. ուստի եւ 1819-ին՝ ազգասէր Հայկազանց ձեռնադրութեամբն սկսաւ այժմու Ներսիսեան Դպրոցի ընդարձակ ուսումնարանին հիմնարկութիւնը՝ Թիֆլիզու մայր եկեղեցւոյ հողին վերայ։

Ուսումնարանի շինութեան համար թէեւ ի սկզբան ժողովուած փողը բաւական համարուած էր, բայց յետոյ շինութիւնը մեծցընելուն, ինչպէս նաեւ մասնաւոր բնակարաններ աւելցուելուն պատճառաւ քիչ եկաւ. ուստի եւ Ներսէս իւր բոլոր ոյժն ու նիւթական օգնութիւնը չխնայելով՝ գրեթէ ինչ որ դրամական կարողութիւն ունէր, բոլորն եւս այն ազգալոյս շինութեանը նուիրեց։ — Այս միջոցները կրկին անգամ ձեռնադր եղան Ներսիսի, նախ՝ Լազարեան իշխանները եւ ապա Վանեցի մահտեսի Գասպարը, որ իւր կտակին մէջ Ներսէս արքեպիսկոպոսին գլխաւոր կտակատար կարգելով՝ նորա հիմնած ուսումնարանին չորս հազար վեց հարիւր ռուբլի խոստացաւ, այսպիսի պայմանաւ. «Նորակառոյց վարժարանի Հայոց աստի Թիֆլիզ քաղաքի՝ յատկացուցեն չորս հազար վեց հարիւր արծաթ մանէթ, եւ սովին գումարաւ գնեալ զանցարժ կայս, զեկամուտ նորին ամի ամի պիտոյացուցեն յաղագս վարժարանին յաւիտեանս ժամանակաց»։

1823-ին շինութիւնը բոլորովին վերջանալէն յետոյ՝ Ներսէս արքեպիսկոպոսը մեծ ծախքով զանազան տեղերէ վարժապետներ հրաւիրեց, որոց մէջ աւելի նշանաւորներն էին, առաջինը՝ Փարիզու Արեւելեան Լեզուաց վարժարանի հայկաբանութեան ուսուցիչ Յակոբ

վարժապետ Շահան-Ջրպետներ (*), եւ երկրորդը՝ Մոսկուայի Լազարեան ձեմարանի մէջ դասատու բազմարդիւն Յարութիւն վարդապետ Աշանդարեանը (²):

Այս միջոցներն էր ահա Ներսիսի կենաց ամենադժուար տարիները. վասն զի մէկ կողմէն Պարսից եւ Ռուսաց մէջ սկսուելու նոր պատերազմին պատճառաւ Ռուսաց Տէրութենէն ընդունած առաջարկութիւններն ու հրամանները կկատարէր, եւ միւս կողմէն եփրեմ կաթողիկոսի հայրապետական գործառնութեանցը օգնութեան կհասներ, Ներսիսեան նորահաստատ դպրոցին բարեկարգութեանը մեծապէս հոգ կտանէր, նորահրաւէր վարժապետաց դասախօսութեանը շատ անգամ անձամբ ներկայ գտնուելով՝ պէտք եղած տնօրէնութիւնները կանէր, Թիֆլիզու Կոնսիստորիայի եկեղեցական եւ երբեմն նաեւ աշխարհական դատերն ու դատաստանները կվճռէր, մէկ խօսքով (1819—24) այն աստիճանի ինքզինքը ազգային գործոց կամաւոր

(*) Շահան-Ջրպետեան Յակոբ վարժապետը ծնած է 1772-ին ղեկամբերի 19-ին եղեսիոյ մէջ, եւ յառաջ եկած է մեր Ներսիսի Շնորհալոյ Շահան եղբոր շառաւիղէն: Իւր սկզբնական ուսումը եղեսիա քաղաքին մէջ Բաղիշեցի Առաքեան Պողոս վարդապետէն առած է. յետոյ Ասիայի ու Եւրոպայի այլ եւ այլ քաղաքները կրթուելով՝ Փարիզու Արեւելեան վարժարանին մէջ հայկարանութեան ուսուցիչ եղած է մինչեւ 1825, ուսկից Թիֆլիզ գնալով մինչեւ 1838-ը ապրեցաւ եւ 66 տարեկան մեռաւ:

(²) Աշանդարեան Յարութիւն վարդապետը որ իւր կենաց վերջին տարիները Նոր-Նախիջեւանի Ս Խաչ վանքին վանահայր էր, առաջակայ վիրաւորելովը 1834 թուականին մայիսի 25-ին վախճանեցաւ: Թէ սորա եւ թէ Շահան-Ջրպետեան Յակոբ վարժապետի ընդարձակ կենսագրութիւնը պատրաստած եմք ուրիշ նշանաւոր շատ հայկազանց կենսագրութեանց հետ մէկտեղ՝ մեր երկհատոր ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՏԱՏՈՒԿ ԱՆՈՒՄԻՑ վերնագրով աշխատութեան համար, որ եթէ (ինչպէս հրատարակած եմք) ղրամական ձեռնտութիւն գտնեմք մեր ազգայնոց կողմանէ, պիտի տպագրեմք:

զոհ ըրած էր, որ երբ 1824-ին գաղղիացի ճանապարհորդ Գամբա ասպետը ղեսպանական պաշտօնիւ Պարսկաստան երթալու ժամանակ Թիֆլիզ գնաց եւ բարեկամացաւ Ներսէս արքեպիսկոպոսին հետ, զարմացաւ նորա անտանելի աշխատանացն ու մեծամեծ դիտաւորութիւններուն վերայ, յորս ակնյայտի կերեւէր պայծառ արշալոյս մի բոլոր Կովկասաբնակ եւ հետեւապէս ամենայն Հայոց փայլուն ապագային համար, ուստի եւ իրաւամբ գրեց իւր ճանապարհորդութեան մէջ եւ անաշառապէս հրատարակեց՝ թէ « Parmi les fondateurs des grands travaux, il n'en est pas de plus recommandable que Nersès, archevêque Arménien, à Tiflis. — այսինքն, Մեծագործութեանց ձեռք զարնող երեւելի անձանց մէջ՝ Հայոց Ներսէս արքեպիսկոպոսէն նշանաւորը չկայ Թիֆլիզու մէջ (¹) »:

Ուսումնարանի դասախօսութեան առարկաներն էին ի սկզբան հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, քերականութիւն եւ քրիստոնէական վարդապետութիւն. այլ եւ ռուսերէն լեզու, ընդհանուր աշխարհագրութիւն, թուաբանութիւն եւ վայելչագրութիւն. բայց Շահան-Ջրպետեանի Թիֆլիզ հասնելէն յետոյ (1826) յաւելցաւ նաեւ եկեղեցական պատմութիւն եւ աստուածաբանութիւն: Ասկէց քիչ մի յառաջ (1825) բացուեցաւ նաեւ Ներսիսեան ուսումնարանի տպարանը, որ ամենայն պարագայիւք ընծայեց ազնուական Աղա Գէորգ Արծրունին: Աշակերտաց թիւը հետզհետէ յաւելնալով՝ 400-ի հասաւ, բայց ուսումնարանի ընդարձակութեանը նայելով՝ նորա սրբազան հիմնադրին միտքն այն էր որ մինչեւ 800-ի հասնի:

(¹) Voyage dans la Russie méridionale, par le Chevalier Gamba. Paris, 1826, t. II, p. 157.

Ներսիսեան դպրոցը մինչդեռ այսպիսի գեղեցիկ սկզբնաւորութեամբ եւ մեծ յառաջադիմութեամբ ցանկալի պտուղներ կիսոստանար Հայաստանի նոր մարդկութեան, եւ ահա 1827 թուականին Ռուսաց եւ Պարսից պատերազմը բացուեցաւ, որով Ներսէսը Տէրութեան կողմանէ Ռուսաց բանակին գործակցութեանը հրաւիրուեցաւ եւ զօրաց հետ մէկտեղ երեւան գնաց:

Պարսից հպատակ՝ Երեւանի ու Հին-Նախիջեւանի Հայերը՝ որ պատերազմի լուրն առնելով՝ սիրտերը կոտրած՝ յոյսերն Սատուծոյ եւ Ռուսաց պաշտպանութեանը վերայ դրած էին, երբ լսեցին որ Պասկեւիչ սպարապետին հետ մէկտեղ պատերազմականաց մէջ Պարսից բանակին վերայ կերթայ նաեւ Ներսէս, իսկոյն սիրտ առին, ուրախացան եւ արիացան, մանաւանդ այն միջոցին՝ երբ Պասկեւիչի ու Ներսիսի առաջեւ, ինչպէս Յետուայ եւ Տապանակի առաջեւ՝ զօրաց պատերազմական փողերը հնչեցընելու ժամանակ Սարտարապատի բարձրաբերձ պատերը՝ երիքովի հոյակապ պարիսպներուն պէս կայծակնահար եղածի նման փլան կործանեցան: Այնուհետեւ Ներսէս Հայոց հետ իբրեւ հայր ընդ որդւոց գրկախառն սիրով միանալով՝ իւր կենդանի օրինակովն ու քաջալերական խօսքերովը Հայկազանց սրտին մէջ ի վաղուց հետէ մոռացուած պատերազմական քաջութիւնն արթնցուց, որք Ռուս զօրաց հետ միանալով այնպիսի անձնանուիրութեամբ պատերազմեցան որ քիչ ժամանակէն բոլոր Պարսից Հայաստանը Ռուսաց ձեռքն անցաւ, ուսկից 8000 տուն կամ 40 հազար հոգի Պարսից լուծը թօթափելով՝ Ռուսաց քրիստոսազօր Տէրութեան պաշտպանութեանը հպատակեցան, եւ այն օրէն ազատեցաւ անօրինաց բռնութիւններէն էջմիածինը, — Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի երկնահաստատ՝ նուիրական Աթոռ:

Ներսիսի այն սխրագործութեանց համար Ռուսաց Տէրութիւնը դեռ պատերազմը չվերջացած նախ՝ 1827-ին յունիսի 17-ին Բարձրագոյն հրամանաւ Ռուսաստանի մէջ եղած բոլոր Հայոց եկեղեցականներն ու նոցա կալուածները քաղաքական հարկատուութենէ եւ զինուորաց բնակութիւն տալու պարտքէն յաւիտեանս ժամանակաց ազատ արաւ. եւ երկրորդ՝ պատերազմին վերջանալէն քիչ մի յառաջ, իբրեւ առանձին պարգեւ (25 յունուարի 1828) Ներսէս արքեպիսկոպոսին Ս. Ղեքսանդրի նեւացոյ ասպետական շքանշանը յուղարկել բարեհաճեցաւ, հետագայ կայսերական հրովարտականս:

«Մըքագան Ներսէս, Արքեպիսկոպոս Հայոց,

«Վաղ ժամանակէ հետէ եւ շատ դիպուածներու «մէջ ցուցանելով Ռուսաց Տէրութեանս Ձեր գովելի «մտերմութիւնը, մանաւանդ Պարսից այժմեան պատերազմին մէջ, — որ, ինչպէս կ'ուսամ շուտով բարեյաջող վերջ կ'ունենայ, — Դուք Մեր զօրաց հետ «մինչեւ այն աստիճանի թշնամեաց դէմ դրած էք որ «Ձեր կեանքը վտանգի մէջ եղած է: Կովկասեան զօրաց առանձին հրամանատար գեներալ — ադիւտանտ «Պասկեւիչը, շատ անգամ իմացընելով Մեզ Ձեր գովանի գործերը, յայտնած է որ պատերազմին բոլոր «ժամանակը Ռուսաց օգտին նախանձաւոր հանդիսացած էք անձամբ անձին, հաստատուն պահելով Հայ «ժողովրդեան մէջ առ Մեզ ունեցած հարազատութիւնը, «ոչ միայն Ձեր բարի խորհուրդներովն ու յորդորանօքը, այլ եւ Ձեր բուն անձին օրինակովը:

«Ձեր այսչափ օգտակար աշխատութեանց փոխարէն եւ Հայազգի ժողովրդեան իմ առանձին շնորհակալութեանս նշան՝ արժան դատեցի վարձատրել Ձեզ

« սբբոյն Աղեքսանդրի նեւացւոյ ասպետական կար-
« գովը, որոյ նշանները թղթոյս հետ յուղարկելով,
« կմնամ Զեր լաւութեանը ցանկացող. »

(Բնագրին մէջ ստորագրած է) ՆԻԿՈՒԱՅ.

Պարսից պատերազմէն վերջն սկսաւ Տաճկաց պա-
տերազմը, որով աստուածային նախասահմանութիւնը
նոր ճանապարհ բանալով Ներսէս արքեպիսկոպոսի
համար, Տէրութեան կողմանէ 1828-ին մայիսի 17-էն
եւ 21-էն Բեսսարաբիա հրաւիրուեցաւ, ուր բոլոր պա-
տերազմին ժամանակը ճշմարտապէս դիւցազնական
քաջութեամբ եւ եկեղեցական փառօք պաշտպան կա-
ցաւ այն տեղի ազգայնոց, միանգամայն եւ Տէրութեան
առ ինքն ունեցած հաւատարմութիւնը աւելցուց: Պա-
տերազմէն վերջը՝ թէեւ եփրեմ կաթողիկոսը իւր ծե-
րութեան պատճառաւ Աթոռը միայնակ կառավարել
չկարողանալով՝ շատ կուզէր Ներսէս արքեպիսկոպոսին
եջմիածին վերադառնալը, բայց Ռուսաց կայսրը 1830-ին
ապրիլի 23-ին մասնաւոր հրովարտակաւ առաջնորդ
նշանակեց գինքը Նախիջեւանի եւ Բեսսարաբիոյ վի-
ճակին, ուր այնուհետեւ 15 տարիի չափ կենալով՝
հետզհետէ պայծառացոյց:

Գրիգոր արքեպիսկոպոսի մահուանէն վերջը (1827)
Բեսսարաբիոյ Հայոց եկեղեցիները երեսի վերայ մը-
նալով՝ եկեղեցական կալուածները շատ տեղ աւերուել
էին, եւ Քիշնեւի առաջնորդարանը (որ հանգուցեալ
Գրիգոր արքեպիսկոպոսին շինածն էր) ոչ միայն այն
երկու տարուանը մէջ իւր առաջին շքեղութենէն
զրկուած ու կիսաւեր դարձած էր, այլ եւ չգիտեմք
որպիսի դրամական հաշուոց մասին քաղաքական իշ-
խանութեան ձեռքն անցած էր. եւ ահա այն էր պատ-
ճառը որ երբ Ներսէս արքեպիսկոպոսը Քիշնեւ գնաց

եւ Հայոց առաջնորդարանը եկեղեցական իշխանու-
թենէն ելած գտաւ, հարկադրեցաւ ի սկզբուն տեղւոյն
երէցփոխան Տէր-Յովակիմեան Մանուկ աղային տունը
իջեւանիլ իւր 8 մարդիկներովը հանդերձ՝ յորոց ա-
ռաջին երկուքն էին Ստեփանոս վարդապետ Արարա-
տեան եւ Գէորգ վարդապետ Մկրտչեան:

Այնուհետեւ Ներսէսը մեծ ուշադրութեամբ սկսաւ
քննել վեճակին եկեղեցական գործերը եւ ըստ կա-
րելոյն կարգի դրաւ, քաղաքական իշխանութեան
ձեռքն անցած Հայոց առաջնորդարանը իրաւացի պատ-
ճառներով յետ առաւ, նորոգեց ու բարեկարգեց. քանի
մի եկեղեցեաց մօտ հոգեւորական դպրոցներ բանալ
հրամայեց եւ արդէն բացուածներուն վերայ փոյթ ու
խնամք ունեցաւ. եւ որպէս զի Հայաստանեայց եկե-
ղեցւոյ պայծառութեան համար ուսեալ եկեղեցական-
ներ պատրաստէ, Մանուկ Պէյ հայկազնոյն ձեռնտուու-
թեամբը մասնաւոր կոնդակաւ Թիֆլիզէն Հնչեշտ հրա-
ւիրեց Զմիւռնացի մեծահոշակ Մսեր վարժապետ Մսե-
րեանը (այժմ մագիստրոս աստուածաբանութեան Մոս-
կուայի Լազարեան ձեմարանին մէջ) եւ իւր վիճակի
այլ եւ այլ քաղաքներէն շնորհալի պատանիներ յու-
ղարկեց այն տեղ, որք պէտք եղած ուսումը սովորե-
լէն յետոյ՝ քահանայութեան սրբազան պաշտօնն ընդու-
նեցան՝ ամենայն արժանաւորութեամբ, ինչպէս Օդես-
սայի՝ եկեղեցւոյ Աւագ քահանայ Տէր Յովհաննէս Թաթ-
սիզեանը, բարեյիշատակ Տէր Թառնիշիւն Խաչենեանը,
Հնչեշտի քահանայ Տէր Թակոբ Թօսուկեանը, եւ այլն:

Մինչեւ այն ժամանակը որ եկեղեցական այլ եւ
այլ զգեստները, մեծագնի անօթներն ու զարդերը գրե-
թէ առանց հաշուոյ եւ մատենի կմնար երէցփոխա-
նաց ձեռքը, վերոյիշեալ երկու վարդապետները Ներ-

սիսի կողմանէ վիճակին այլ եւ այլ քաղաքներն երթալով՝ իւրեանց Առաջնորդի առաջադրութեանը համեմատ ժապաւինեալ մատեաններ սահմանեցին վիճակին ամենայն եկեղեցեաց համար, զորս եւ Կոնսիստորիայի կնքովն ու իւրեանց ստորագրութեամբը վաւերացուցին: Նոյնպէս եւ եկեղեցեաց արծաթեղէն ու ոսկեղէն հին ու աւելորդ անօթները մասնաւոր ցուցակաւ ժողովեցին Քիշնեւի Կոնսիստորը տարին, եւ Ներսիսի հրամանաւր հալեցընեւէն յետոյ վաճառեցին ու նոցա գնովը՝ մէկ կողմէն բազմավաստակ եւ փորձառու Սամուէլեան Յարութիւն Աւագ քահանային վերականգնութեամբը՝ Քիշնեւի եկեղեցական խանութները, զինեալներն ու ամբարները շինուեցան, եւ միւս կողմէն՝ բազմաշխատ երէցփոխան Առաքելեան Պետրոս աղայի հոգաբարձութեամբը Հայոց հանգստարանի մօտն եղած պաղաքեր ծառերով լեցուն ընդարձակ պարտեզը, որոց արդիւնքը մինչեւ ցայժմ թէ՛ նոյն իսկ Նախիչեւանի եւ Բեսսարաբիոյ Կոնսիստորիայի, եւ թէ՛ — սորա կարգադրութեամբ — վիճակին Հոգեւորական Կառավարութեանց ծախուցը կգործադրուի. թէպէտ այն մեծածախ շինութեանց առաքելապատիւ Հիմնադրին դիտաւորութիւնը հաւանականաբար այս էր, որ տարուէ տարի եկամուտը շահեցընեւով՝ Թիֆլիզու Ներսիսեան դպրոցին պէս մէկ ուսումնարան եւս Բեսսարաբիոյ վիճակին մէջ հիմնէ:

Ներսիսի այս ազգօգուտ եւ հանրաշահ դիտաւորութիւնը ժամանակի կարօտ լինելուն պատճառաւ, թէեւ ինքը չկարողացաւ գործադրել, բայց աստուածային նախասահմանութիւնը անկատար չթողուց իւր հարազատ եւ սրբազան պաշտօնէին նաեւ այս բաղձաւքը, վասն զի անկէց 27 տարի անցնելէն յետոյ՝ մէկ անակնունեի կերպով՝ Սյվազեան Գաբրիէլ գիտնական

վարդապետը (այժմ եպիսկոպոս) Փարիզէն Ռուսաստան եկաւ, եւ Ներսիսի առաջնորդութեան աթոռը նստելով՝ իսկոյն մէկ եկեղեցական ուսումնարան բանալու աշխատեցաւ, որ վերջը Նոր-Նախիչեւանցի Խալիբեան Յարութիւն աղայէն մեծ գումար ընդունելով՝ այժմու Խալիբեան ուսումնարանը բացուեցաւ, ըստ ամենայնի համաձայն Ներսիսի նպատակին, ուսկից թէ՛ եկեղեցական եւ թէ՛ աշխարհական երիտասարդներ ելան, յորոց այժմ ոմանք քահանայութեան, ոմանք վաճառականութեան եւ շատերը վարժապետութեան կպարապին այլ եւ այլ քաղաքաց մէջ:

Եւ այնպէս, մինչդեռ Ներսէս արքեպիսկոպոսը իւր ժողովրդոց վիճակը հետզհետէ բարւոքելու կաշխատէր, Յովհաննէս Ը կաթողիկոսը վախճանեցաւ (1842 թուականին մարտի 26), որով եւ բոլոր ազգը Գանգեսի եզերքէն մինչեւ Նեւայի ափունքը «Քանի որ Ներսէսը կենդանի է, — կասէին միաբանութեամբ, — իրմէն աւելի արժանաւոր անձն չեմք ճանաչեր Լուսաւորչայ սուրբ Աթոռը ժառանգելու»: Այս լուրը հետզհետէ տարածուելով՝ արդէն Ներսէսը կաթողիկոսի տեղ ընդունուած էր Հայոց կողմանէ. բայց որովհետեւ Ռուսաց Տէրութեան Սահմանադրութեանը համաձայն՝ աշխարհիս այլ եւ այլ կողմերն եղած Հայոց եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորաց քուէարկութեամբը կընտրուի կաթողիկոսը, էջմիածնայ սրբազումար Սիւնհոդոսը իւր պարտականութեանը համեմատ Կոստանդնուպոլսոյ, Երուսաղեմի, Պարսկաստանի եւ ուրիշ տեղերու նշանաւոր եկեղեցականաց ձեռքովն իմացուց բոլոր Հայկազանց հին կաթողիկոսին մահն ու նորոյն ընտրութեան պատրաստութիւնը, որով եւ 1843-ին ամէն տեղէ պատգամաւորներ երթալով, ապրիլի 15—17 եղած քուէարկութիւններէն իմացուեցաւ

38-111 1843

որ ըստ մեծի մասին Ներսէս արքեպիսկոպոսը կուզէն
Լուսաւորչի Աթոռակալ, ուստի եւ Ռուսաց կայսեր
բարձրագոյն հրովարտակովը նոյն տարւոյ Օգոստոսի
10-ին կաթողիկոս հաստատուեցաւ:

Ներսիսի ընտրութեան եւ կաթողիկոս հաստա-
տուելուն լուրը քանի մի օրուան մէջ մինչեւ ամենա-
հեռաւոր տեղեր տարածուելով՝ անպատմելի եղաւ
Հայկազանց ուրախութիւնը, մանաւանդ Կովկասաբնակ
Հայոց, որք ի վաղուց հետէ վայելած լինելով նորա
հայրական քաղցր սէրը, իւր բացակայութեանը պատ-
ճառաւ զրկուած էին նորա տեսութենէն. ուստի եւ
այն աստիճանի անհամբերութեամբ կսպասէին իրեն՝
որ մէջերը Ներսիսի գալստեան վերայ խօսք եղած
ժամանակը, Աստուծմէ մասնաւոր կեանք կխնդրէին
որ արժանացընէ զիրենք կրկին անգամ Ներսէսը տես-
նելու եւ նորա հայրապետական սուրբ օրհնութեանն
արժանանալու:

Բայց այս նոցա փափաքը շուտով չկատարուեցաւ.
վասն զի Ներսէս՝ Լուսաւորչի Աթոռը արժանապէս
ժառանգելէն յետոյ՝ Ռուսաց կայսրը Քիշնեւէն Պե-
տերբուրգ հրաւիրեց զինքը, որպէս զի կաթողիկոսը
դիւրութիւն ունենայ Հայոց ազգի ապագայ բարօրու-
թեանը համար կայսեր հետ երես առ երես խօսելու
եւ այս մասին պէտք եղած արտօնութիւնները խնդրե-
լու իրմէ. ուստի եւ Ներսէս 1843 թուականի վերջին
ամիսները Պետերբուրգ գնաց, ուր թէեւ ի սկզբան
քանի մի ամիս հիւանդացաւ, բայց յետոյ աստուածային
մասնաւոր ողորմութեամբը պէտք եղած առողջութիւնը
գտնելով՝ ժամանակին հարկաւոր ազգային խնդիր-
ներուն վերայ մտադրութիւն դարձուց, Պետերբուրգի
եւ Մոսկուայի եկեղեցեաց եւ նոցա պաշտօնէից բարե-
կարգութեանը վերայ հոգ տարաւ, իւր ազգօգուտ

դիտաւորութիւնները Ներքին Գործոց Ոստիկանին
յայտնելով՝ նորա ձեռնտուութիւնը խնդրեց եւ ամենայն
հարկաւոր բանի վերայ պէտք եղած ուշադրութիւնը
դարձրնէլէն յետոյ Պետերբուրգէն ելաւ:

Եւ որովհետեւ Քիշնեւի Կոնսիստորիային մէջ այն-
պիսի գործեր կային որ նոր կարգադրութեանց պէտք
ունէին, վեհափառ կաթողիկոսն էջմիածին երթալու
ժամանակ, նախ՝ Քիշնեւ հանդիպեցաւ ու հարկաւոր
տնօրէնութիւններն արաւ (1844, օգոստոսի 15), եւ
ապա վիճակին քաղաքներէն անցընելով՝ եկեղեցեաց
բարեկարգութեանն ու դպրաց ժամասացութեանը վերայ
մասնաւոր փոյթ ունեցաւ, ժողովրդական դպրոցները
աչքէ անցուց ու նոցա մէջ եղած վարժապետները քա-
ջալերեց. իւրեանց կոչմանն արժանաւոր եկեղեցական-
ները առատօրէն վարձատրեց, անարժանները անաչա-
ռապէս պատժեց երեցփոխաններէն եւս եկեղեցական
փողերուն հաշիւները ճշդութեամբ ստանալու համար,
երեք պատուաւոր գործակալ կամ ըստ Խրիմեցոց՝
Արոսակալ դրաւ, որք էին. Բեսսարաբիոյ մէջ՝ Աւետեան
Աւսուսմասուր աղան, Խրիմու մէջ՝ Տէօվէթեան Թորոս
աղան եւ Նախիջեւանի մէջ՝ Խալիբեան Յարութիւն աղան,
եւ սոցա վերայ պարտք դրաւ որ ամէն տարի բոլոր
երեցփոխաններէն հաշիւ պահանջեն, տարեկան ար-
դիւնքն ստանան՝ իւրեանց մօտը պահեն, եւ էջմիածնայ
Սիւնհոդոսին յայտնելէն յետոյ՝ նորա կարգադրու-
թեանը սպասեն:

Եւ այսպէս՝ Նախիջեւանի եւ Բեսսարաբիոյ վիճակը,
ուր զրեթէ 17 տարի առաջնորդութիւն արած էր,
վերջին անգամն եւս—իբրեւ կաթողիկոս—հաստատուն
հիման վերայ բարեկարգելէն յետոյ՝ ճանապարհը շա-
րունակեց եւ 1845-ին դեկտեմբերի 8-ին Մսարոպոյ
քաղաքը հասաւ, ուր Ամտէրխանի առաջնորդը օրերով

46020

45-77a

յառաջ այն տեղ սպասելով՝ իւր եկեղեցական խմբին ու աշխարհական եւ քաղաքական անձանց հետ մէկ-տեղ վայելուչ ընդունելութիւն արաւ: Ներսէս այս տեղի ազգային գործերուն եւս առանձին մտադրութիւն դարձրնելու եւ բարեկարգելու համար մէկ ամբողջ շաբաթ կացաւ, ուսկից ճանապարհը շարունակելով՝ դեկտեմբերի 16-ին Անանուր հասաւ:

Թիֆլիզաբնակ Հայերը այնքան ժամանակէ հետէ սպասած հայրապետին գալուստը լսելով՝ իսկոյն բոլոր խանութներն ու գործարանները փակեցին, եւ վեհափառ այցելուին ընդառաջ գնալ փութացին, որ Թիֆլիզու Վերա կոչուած տեղէն մինչեւ Դիգոմեան դաշտը եւ անկէց եւս մինչեւ Մրցխէթայի մերձակայքը քանի մի վայրկեցի մէջ արանց եւ կանանց բազմութեամբ լցուեցան. իսկ այն փողոցները՝ ուսկից պիտի անցնէր կաթողիկոսը, նոցա վերայ շինուած փառաւոր տներուն պատուհանները, պատշգամներն ու կառուրները գոյնզգոյն հագուստներով զարդարուած Հայ եւ Վրացի տիկիւններն ու օրիորդները բռնած էին, որոց ամենուն երեսին վերայ իւրեանց հոգւոյ ներքին ուրախութիւնը կփայլէր պայծառապէս:

Միւս օրը, այսինքն դեկտեմբերի 18-ին առաւօտը՝ Վրաստանի եւ Իմերեթի առաջնորդ բարեյիշատակ Կարապետ արքեպիսկոպոսը՝ երկու եպիսկոպոսաց, երկու վարդապետաց եւ քանի մի աւագ քահանայից հետ մինչեւ Դուշեք գնաց զիմաւորելու վեհափառ հայրապետին, ուր իւր թեմի բարելաւ դրութեան գրաւոր յայտարարութիւնը մատուցանելէն յետոյ, ուղեկից եղաւ կաթողիկոսին մինչեւ յիշեալ Վերա կոչուած տեղը:

Այս տեղ բերած ու պատրաստած էին հայրապետական գաւազանը, դրօշն ու կառքը. եւ այս տեղ եկած կսպասէին Անդրկովկասեան սահմանի քաղաքա-

կան գլխաւոր կառավարիչ գեներալ-լէյտենանտ *Լա-դիսկին*, հրամանատար զօրաց Հիւսիսային Դաղեստանի գեներալ-լէյտենանտ կնիազ Բարսեղ *Բեհրոսեանը*, Կովկասեան փոխարքայի դիւանատան վերատեսուչը եւ ուրիշ շատ նշանաւոր անձինք, որք վեհափառ այցելուին աջը համբուրելով՝ նորա հայրապետական օրհնութիւնն առին: Յետոյ կաթողիկոսական կառքը նստելով Ներսէս սկսաւ յառաջ երթալ երկու վարդապետաց հետ, որոց մէկը հայրապետական գաւազանը կկրէր եւ միւսը՝ դրօշը. կառքին զիմացէն եւս զարդարուն ձիերով երկու պատուաւոր հայկազունք կերթային, եւ ետեւէն երկու շաթիրները (կաթողիկոսական սպասաւորները) կարմիր հագուստներով, կառքին աջ ու ձախ կողմը կանգնած:

Դեռ քաղաք չմտած՝ ընդառաջ ելին Ներսիսի՝ օգոստափառ կայսեր ֆիլգել-աղիւտանտ կոմս *Բենկեն-դորֆ*ն ու փոխարքայի որդին, եւ կնիազ Վորոնցովի կողմանէ շնորհաւորացիցին վեհափառ հայրապետին բարեյաջող ճանապարհորդութիւնը: Երբ քաղաքին ծայրը հասաւ, Թիֆլիզու գաւառապետ գեներալ-մայիօր *ժերեքցով*ն ելաւ զիմացը եւ իւր ուրախութիւնը յայտնեց վեհափառին ողջամբ ժամանելուն վերայ. յետոյ քիչ մի յառաջ մղելով կառքը՝ Վանքի մայր եկեղեցւոյն ահագին զանգակի առաջին դրնդիւնը լսուեցաւ, որուն ձայնակից եղան իսկոյն Հայոց 24 եկեղեցեաց միւս զանգակները՝ Ներսիսի քաղաք մտնելուն պատճառաւ եկեղեցեաց ուրախութիւնը հրատարակելով:

Աղեքսանդրեան հրապարակի վերայ կսպասէին Թիֆլիզու բոլոր եկեղեցականները, ուր քանի մի վայրկեցի մէջ անթիւ բազմութիւն արանց եւ կանանց լրցուած էր: Ներսէս տեղ հասնելուն պէս՝ ելաւ կառքէն եւ իւր հայրապետական օրհնութիւնը բաշխելով ժողո-

վրդոց՝ իրեն համար պատրաստուած ամպհովանւոյն տակը կանգնեցաւ: Յետոյ ձայնաւոր կղերաց « Ուրախ լեր սուրբ եկեղեցի » շարականին ներդաշնակ երգեցողութեամբը Վանքի մայր եկեղեցին զնաց, ուր նախ Կարապետ արքեպիսկոպոսը մէկ համառօտ ատենախօսութիւն անելով ժողովրդեան կողմանէ՝ փառք տուաւ Թագաւորին Թագաւորաց ու վեհափառ կաթողիկոսին գալուստը շնորհաւորեց. եւ ապա Ներսէսն ինքը, որ իւր առ ազգն ունեցած անչափ սէրը կարճառօտ կերպով բացատրելէն յետոյ՝ քաջալերեց զժողովուրդը իւրեանց ապագայ բարօրութեան համար եւ յետոյ եկեղեցականաց հանդիսաւոր ուղեկցութեամբը Վեհարան մտաւ:

Միւս օրն սկսաւ ընդունել Ներսէս՝ մեր եւ օտարազգի այցելուները, եւ Թիֆլիզու քաղաքացւոց կողմանէ մէկ գեղեցիկ ճառ կարդաց Պարոն Տէր-Շմաւոնեանը: Ճառէն յետոյ մարդ պէտք էր ականատես լինէր որ կատարելապէս հասկացողութիւն ունենար այն փոխադարձ սիրոյն վերայ, որով հոգեւոր որդիքը իւրեանց հօր գիրկը կրիմէին ուրախութեամբ, եւ եկեղեցւոյն հայրը անպատմելի սիրով ողջագուրելով գիրենք կօրհներ ու կքաջալերէր: Այն մէկ անգուգական սէր էր՝ մարդուս հոգւոյ քաղցր զգացմունքէն յառաջացած, որ միայն հոգւով կարելի էր իմանալ եւ մարդկային ճարտարութիւնն ու գրիչը տակաւին չունին այն միջոցներն ու բառերը որ կարողանան ճշդութեամբ բացատրել ապագայից: — Սոյն օրն եկան այցելութեան նաեւ Կովկասու Փոխարքայ Մ. Ս. Վորոնցովն ու իւր կիներ:

Այնուհետեւ կաթողիկոսը ամբողջ չորս ամիս կեցաւ Թիֆլիզ, ուր ամէն բանէն աւելի մտադրութիւն դարձուց Ներսիսեան իւրակերտ դպրոցին բարեկար-

գութեանն ու յառաջադիմութեանը, եւ 1846 Թուականին մայիսի 5-ին ճանապարհ ելնելով՝ նոյն ամսոյ 8-ին Նրեւան եւ անկէջ եւս Ս. Էջմիածնի մայր Ս. Թոռը հասաւ:

Մէկ ամսէն վերջը, այսինքն Յունիսի 9-ին նշանակելով օծութեան օրը՝ ամէն տեղերէ 800-էն աւելի եկեղեցական եւ աշխարհական անձինք զնացին հանդիսին ներկայ գտնուելու, յորոց 179 հոգիքը միայն եկեղեցականք էին, այսինքն 14 արքեպիսկոպոսունք եւ եպիսկոպոսունք, 50 վարդապետք, 65 աւագ քահանայք եւ 50 աւագ սարկաւագունք եւ ուրարակիրք: Օծութեան հանդէսը վերջանալէն յետոյ՝ երկու շնորհաւորութեան ճառեր կարդացուեցաւ եկեղեցւոյն մէջ, որոց մէկը *Շահխաթունեան* Յովհաննէս եպիսկոպոսը կարդաց հայերէն լեզուաւ, եւ միւսը *Շահնազարեան* Կարապետ վարդապետը ռուսերէն լեզուաւ. իսկ այլ եւ այլ տեղերէ քահանէն աւելի նոյնպիսի ճառեր ընդունեցաւ Ներսէս, որպէս նաեւ զանազան երգեր, որոց մէկուն քանի մի տունը մեր Ընթերցողացը իբրեւ ճաշակ կղնեմք այս տեղ (*).

Թընդաց երկինք անեղ ի ձայն նայթեաց կամարն ամպրոպեան,
Յոլացան լոյս գոյն աղեղան ձիւք շող ի շող շողոտան.
Եկն ի հանդէս այր սրբազան՝ նրսաւ յԱթոռ լուսակէտ,
Հանդիսակիցք փառազարդեալ անդ շար ի շար բազմեցան:
Հարցեմ ձվ է, հարցեմ ձ է վեհանձն հոգին դիւցազեան,
Որ Հայոց Տէր, Հայոց իշխան, Հայոց Ներսէս Սրբազան:
Փողք հրնչեցին զարթիւեան զուարթունք ի դուռն քափեցան
Ընդ օդ վրնիս սաւառնացեալ քէս բաբախեն գան ի գան.
Դեռ ոչ գիտեն առ ինչ բազմի վեհ փառաւոր ծերունին
Եւ քե առ ինչ հրեւին խընդան յայն լուսապանձ Տեսարան:
Հարցեմ ձվ է, եւ այլն.

(*) Այս երգը բանաստեղծութիւն է *Արարատեան* Սղեքսանդր վարդապետին, որ երկար լինելուն պատճառաւ՝ առ այժմ առաջին չորս տունը միայն տպեցինք:

Փառացն Աստուած անեղատես վերուս ի վայր որոնաց.
 ,,Դա է, ասե, իմ սիրելին, սիրս իմ դրմա հաւատաց.
 ,,Առե՛ք ըզբազ զայս խառանիւ, առե՛ք զայս փոլ լուսափայլ
 ,,Դի՛ք ի գրլուխն, ասացե՛ք քե՛ր Աստուած ըզեզ պըսակեաց“ :
 Հարցե՛ք ո՞վ է, եւ այլն :

Խընդաց երկինք, խընդաց երկիր յայն ծայն փառաց աստուածեան
 Սըրինգ՛ Ժայնեն գեղասինան՝ տալի՛ք երգեն տասնադեան,
 Ինքըն յԱթոռ լուսանրկաւ քազըն փայլի ի գրլուխ,
 Դեմս ի խոնարհ կալեալ ասե՛ր, քե՛ր, Այս փառաց չեմ արժան“ :
 Հարցե՛ք ո՞վ է, հարցե՛ք ո՞վ է վեհանձն հոգին դիւցազեան,
 Որ Հայոց Տէր, Հայոց Իշխան, Հայոց Ներսէս Սըրբազան. եւ այլն :

Սոյնպիսի մէկ երգ եւս Ներսիսի Երեւան մտած
 միջոցին երգեցին, որոյ առաջին տունը այս է.

Երգեցե՛ք ազգ Հայոց զգալուս մերոյս հրակայի,
 Որ երբեմն պաշտպանե՛ր զպարիսպ սուրբ էջմիածնի.
 Աթոռն աստուածիջեան ձեռամբ ստին փրկեցաւ,
 Անհեռունչ Հայկազանց տէր եւ փրկիչ յայնեցաւ. եւ այլն :

Օծութեան հանդիսէն մէկ ժամ անցնելէն յետոյ
 1950 հոգւոյ կերակուր տրուեցաւ, յորոց 250-ը Վե-
 հարանի սեղանատան մէջ նստան, 1250-ը հասարակաց
 սեղանին վերայ, եւ 450-ը (որ ստորապատիճան ուս
 զինուորականք էին) Ղազարապատի ընդարձակ բակին
 մէջ պատրաստած տեղւոյն վերայ: Երեկոյին վանքի
 բոլոր տեղերը ճրագալուցով զարդարուեցաւ եւ բազ-
 մութիւնը մինչեւ կէս գիշեր ուրախութիւն արաւ պա-
 տերազմական երաժշտականաց եւ ազգային փողհարաց
 ու թմբկաց հնչմամբը:

Հանդիսէն մէկ օր վերջը արձակեց Ներսէս այլ եւ
 այլ տեղերէ եկած բոլոր եկեղեցականները, ոմանց
 բերանացի շնորհակալութիւն անելով, ոմանց օրհնու-
 թեան կոնդակ տալով եւ ոմանց խաչով կամ կամի-
 լաֆկայով եւ կամ փիլոնով վարձատրելով, իբրեւ նշան

նոցա այն մեծ հանդիսին արժանանալու բաղդն ունե-
 նալուն. իսկ ինքը առանց ժամանակ կորուսանելու
 նոյն օրերէն սկսաւ Ս. Էջմիածնայ Սիւնհոդոսի բարե-
 կարգութեանը հոգ տանել, եւ նորա սրբազան անդամոց
 եւ աշխարհական պաշտօնատեարց գործողութիւննե-
 րուն վերայ պէտք եղած մատարութիւնը դարձրնել:

Նոյն տարւոյ հոկտեմբերի 27-ին Գիւտ խաչի կիւ-
 րակէ օրը կատարեց Ներսէս մեռոն օրհնելոյ մեծ
 հանդէսը, որով աշխարհիս ամէն կողմէն դարձեալ
 եկեղեցական եւ աշխարհական անձինք գնացին էջ-
 միածին. եւ յետոյ դեկտեմբերի 17-ին նորէն Թիֆլիզ
 վերադարձաւ, ուր առաջուան պէս մեծ բազմութեամբ
 ընդառաջ գնացին ազգայինք եւ օտարք եւ ամենայն
 սիրով ընդունելով զինքը՝ նորա հայրապետական
 օրհնութիւնն առին:

Այնուհետեւ Ներսէս՝ չնայելով նորա ծերութեան
 հասակին, իւր հայրապետական գործերը կատարելէն
 զատ՝ մեծ եռանդով կաշխատէր նաեւ ազգիս բարոյա-
 կան դաստիարակութեան եւ ուսումնական յառաջա-
 դիմութեան մասին. եւ այս պատճառաւ հրաման հանեց
 որ Թիֆլիզու Հայոց ամէն եկեղեցեաց սրահներուն մէջ
 ժողովրդական դպրոցներ բացուին: Բայց որովհետեւ
 Տէրութեան օրէնքն այնպէս էր որ Վրաստանի ամենայն
 դպրոցները Կովկասու Ուսումնական Շրջանակի իշ-
 խանութենէն կկախուէր, որով եւ շատ դժուարութեամբ
 կբացուէին այն դպրոցները, Ներսէս պէտք եղած տը-
 նօրէնութիւններն ու զրագրութիւններն արաւ, եւ
 1853-ին հրաման եկաւ Տէրութենէն որ Հայոց եկեղե-
 ցեաց եւ վանօրէից մօտ բացուած դպրոցները Կովկասու
 Ուսումնական Շրջանակի իշխանութենէն դուրս լինին,
 եւ Հայ եկեղեցականաց կառավարութեանը մնան:

Յետոյ Թիֆլիզու եւ Էջմիածնի տպարաններէն ելած գրոց տպագրութիւններուն վերայ ուշադրութիւն դարձրնելով՝ պակասաւոր գտաւ. ուստի եւ 1854-ին չորս տպագրական մամուլ բերել տուաւ Եւրոպայէն՝ Մոսկուայի վաճառական Անանեան Յովհաննէս աղային ծախիւքը, որոց երկուսը Թիֆլիզու տպարանին թողուլ հրամայեց եւ երկուսը Էջմիածին տանել:

Էջմիածնի մէջ եւս իւր անմահ յիշատակը նաեւ տեսական կերպով թողելու մտքով 1847-ին մէկ ընդարձակ անտառ շինել տուաւ Ներսէս, յորում 47 հազար երկու հարիւր երեսուն այլ եւ այլ տեսակ պտղատու եւ անպտուղ ծառեր տնկեց Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսին վերակացութեամբը, որպէս զի թէ ամառուան սաստիկ տաքերու ժամանակ զբօսանաց տեղ լինի վանքի միաբաններուն, եւ թէ միանգամայն ժամանակով Էջմիածնի համար պէտք եղած վառելու փայտը կտրուի անկէջ:

Նոյնպէս մէկ գեղեցիկ լիճ շինել տուաւ վանքի պարըսպին մօտ, որոյ աւելցած ջուրը պէտք եղած ժամանակ առանձին ջրանցքներով անտառը կթափուի եւ հարկաւոր տեղերը կջրէ:— Այս լճին մէջ ամառ ձմեռ ձուկներ կպահէ վանքին տնտեսը:

Եւ այսպէս, Ներսէս իւր սարկաւազութեան օրէն մինչեւ իւր կաթողիկոսական կենաց վերջին օրը ազգիս կենցաղօգուտ պիտոյիցն ու նորա բարոյական եւ ուսումնական յառաջադիմութեանը աշխատելով, վերջապէս 1857 թուականին փետրուարի 13-ին, իւր 86 տարեկան հասակին անակնկալ մահը յափշտակեց զինքը Հայաստանեայց Մայր Աթոռէն, եւ մարմնոյն երկրաւոր կապանքն արձակելով, նորա աստուածարեալ հոգին երկնային կապանքով միացուց իւր Արարչին հետ:

Միւս օրն առաւօտը Ներսիսի մահուան լուրը Թիֆլիզու հայկական եկեղեցեաց ողբաձայն զանգակնահարութեամբը տարածուելով, բոլոր Հայերը սգոյ մէջ ընկղմեցան:

18-ին կէսօրուան չորս ժամուն մարմինը մեծ հանդիսիւ վեհարանէն վանքի մայր եկեղեցին տարին ի ներկայութեան փոխարքային Կովկասու, ռուս արքեպիսկոպոսին Վրաստանի, զինուորական եւ քաղաքական մեծամեծ պաշտօնատեարց Թիֆլիզու եւ անթիւ բազմութեան այլ եւ այլ ազգի եւ աստիճանի անձանց:

Վեհափառ հանգուցելոյն մարմինը՝ Էջմիածնի Սիւն-հոգոսի սրբազան անդամոց յապաղելուն պատճառաւ ամբողջ երեք օր պահուեցաւ յիշեալ եկեղեցւոյն մէջ, ուր բազմութիւն արանց եւ կանանց առաւօտունէ մինչեւ երեկոյ ուխտաւորաց պէս այն եկեղեցին յաճախելով՝ Ներսիսի Աջը կհամբուրէին:

Այն երեք օրը հեռուէն դիտողին այնպէս կերեւէր թէ նոյն միջոցները Թիֆլիզու մէջ ազգութեան եւ հաւատոյ կողմանէ ամենեւին տարբերութիւն չկայ, վասն զի ոչ միայն զանազան քրիստոնեայք, այլ եւ Հրեայք եւ Մահմետականք կերթային իւրեանց վերջին համբոյրը տալու:

Վերջապէս փետրուարի 24-ին պատարագէն վերջը հանգստեան հանդէսը կատարուեցաւ նոյն եկեղեցւոյն մէջ, ուր ժողովուած էին Թիֆլիզու բոլոր եկեղեցականքը եւ որոց զլուխ կեցած էր հանգուցեալ հայրապետին արժանապէս ամենասիրելի եղած անձը՝ Սարգիս արքեպիսկոպոս Ջաշաշեան:

Յուղարկաւորութեան հանդէսը կէսօրուան 2-րդ ժամուն կատարուեցաւ: Ամենէն առաջ տասներկու հայ ձիաւորք կերթային եւ սոցա ետեւէն դազաղակիր կառքը ոսկեզարդ սեւ ամպհովանիով ծածկուած եւ

վառ ճրագներով շրջապատուած: Յետոյ կերթային Ներսիսեան դպրոցի աշակերտքը երկու կարգ շարուած եւ ձեռքերը վառ մոմեր բռնած. քիչ մի անդին սեւազգեստ եկեղեցականքն ու դագաղը, որ եկեղեցական անձինք կտանէին. իսկ դագաղին ետեւէն փոխարքայն եւ ամէն աստիճանի զինուորական եւ քաղաքական անձինք կերթային, եւ ապա բազմութիւն անթիւ ժողովրդոց զանազան ազգաց:

Քաղաքէն դուրս *Էրիվանակիյ գաւառ* ասուած տեղը կրկին հոգեհանգիստ կատարուեցաւ, եւ վեհափառ հանգուցելոյն դագաղը փակ կառքի մէջ դրուելով՝ Սիւնհոդոսի անդամոց եւ ռուս հեծելազօրաց պահպանութեամբը էջմիածին յուղարկուեցաւ: Նոյն օրը հայկազն Վարդան Աստուածատրեան Արշակունի իշխանը մեծածախ հոգեհաց պատրաստելով, բոլոր յուղարկաւորները՝ որպէս նաեւ Թիֆլիզու հայ արհեստաւորները կերակուրի հրաւիրեց, եւ արգելանոցի մէջ բռնուած անձանց դրամական օգնութիւն արաւ: — «Այն օրը կերակրուող անձանց թիւը 10 հազարէն աւելի էր» կասէ Թիֆլիզու Կովկաս լրագիրը:

Երկու օրէն վերջը էջմիածին տարին հանգուցելոյն մարմինը, եւ ըստ կանոնի Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ՝ մարմնոյն օծումը շքեղաշուք հանդիսիւ կատարելէն յետոյ, վանքի զաւթին աշակողմը՝ Դանիէլ կաթողիկոսի շիրմին մօտը թաղեցին:

Այնուհետեւ էջմիածնի Սիւնհոդոսին կարգադրութեամբը Հայաստանեայց եկեղեցիները ամենայն տեղ հանգստեան պաշտօն կատարեցին, եւ մինչեւ նոր կաթողիկոսի ընտրութիւնը՝ Ներսիսի անունը յիշատակեցին սուրբ պատարագի մէջ:

Եւ այսպէս, Ներսիսի մահուան գոյժը աշխարհիս չորս կողմը տարածուելով՝ ազգային եւ օտար լրա-

գրապետներէն ոմանք իւրեանց թերթերուն նիւթ արին այս մեծահոշակ Հայկազնոյն համառօտ մահացուցակը, եւ ոմանք եւս դամբանական ճառեր հրատարակեցին, որոց մէջ Փարիզ տպուած 1857 թուականի «Մասեաց Աղանի» օրագրոյն բանաստեղծական գրուածքը ամենէն իմաստալի տեսնելով՝ պատշաճ կհամարիմք այս տեղ ամբողջապէս հրատարակել:

«ՀԱՆԳԻՍՏ ՅԱԻՏՏԵՆԻՅ»

Տ Ե Ա Ռ Ն Ն Ե Ր Ս Ե Ս Ի

ՎԵՆԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

«Ձայն գուժեաց յԱյրաւսայ, եւ հրնչեցին բեւեռ կրկին, Նընջեաց Հովիւրն մեր արբուն, եւ սուգ պատեաց զամենեւին. Ահագինս մըռնչեաց սպիտակափառն մեր Մասիս, Սեպուհ, Կովկաս եւ Արագած ընդ Տորոսի հաւաչեցին:

Ո՛հ, այս քանիցս այրեացար, եկեղեցիդ Հայաստանեայց. Այս քանի արսօւր հեղուս ի քոյդ չբնաղ ականողեաց. Զհւր վիժես դու քաղցրահամ յաղինասիպրդ դարասից երբ դառն ուխտ արձատուաց մինչեւ ի ծով լայնասարած:

Մերք շուրջ հայիս կոյսդ աշագեղ ի բաց ըզօդըն պարուրեալ... Ա՛հ, մինչեւ ցէրք յաջմե բոսոր՝ ընդ անեկե ծուխ մըրբկեալ Տեանիցես եւ սարսիցես եւ բաւալեալ անկանիցես Մինչեւ անդրեհ սիւզ արփեցնուց ի դմսըդ սուրբ առնու ծաւալ...

Լուսաժընուդ քո զաւակունց ընդ սիւզես վայրավաթին Քեզ ողբակիցք եմ ի սրբե, ընդ քեզ ի ջայլքս գումարին. Հօսապեհքն զաքոռով քո սեւաքոյր տարածանեն, եւ խաւանց հոյլք խուռներամ դրոյք ըզեւ տալ խուռնային:

Են եմ, ճի, եւ խորացեալք ի սուրբ գրկացրդ մայրենի, Որոց վայրք եւ ժամանակք ետուն զոգցես սրբ վայրենի, եւ խընսան ընդ վիշտս քո եւ ընդ պարծանքդ տագնապին. Ա՞յսպէս ուսան ի Լաթիոն, ա՛յսպէս յորդոց Ալբիոնի...

Բայց եւզ յնւ, Մայր անաբաս, պայծառ աւուրին այն առաջինք
Յորս հոգւոյ մէր Լուսասուին ցուցաւ տեաիլ, բանք անագինք,
Իբր օղիք ոչ նոյնգունակ անցին ընդ հուրքն եւ ընդ ջուր
Մինչեւ ելին ի սուրբ հանգիստ, մինչեւ բացան նոցա երկինք.

Նրնջեաց Ներսէս արժանընթիւ արքունակալ սուրբ Ներսիսեանց,
Ողջակիզեալ առ Տէր ու առ Հայս սիրոյ բոցովքն գերազանց,
Վեհին սասն անակնառու, եւ կրքսեաց հայր խրնամոտ,
Եւ սրբին կորով ըզհուր, վառեւ յալիս գլուխ հերապանն:

Դու ճլ Հայր, կառնդ Իսրայէլեան, յալիբեակեալ յանկարծ ի մենջ,
Յն դիմես ի մուշլ երկրէ շաղեալ ի լոյս փողփողեմեջ,
Ո՞ւր բոյինդ եղիսեռս, ո՞ւր Մովսիսին յաջորդ Յեսու,
Ո՞ւր տացի եւ Աղաւնիս զբերանոյն շիղ բոյնասեմնչ...

Այո, շիղ ի բերանին դարձ ի տապանդ Էջմիածնի
Աղաւնեակս առնէր Նոյեան փուրալ ի գիրկարդ հայրենի.
Սասանեալ եւ սրբաբեկ արդ առ ափամբ Սենեայ մընչէ,
Գուժկան՝ ոչ աւեսաբեր կացեալ. աւանդ, Հայաստանի:

Առ այժմիկ հուշ դու էին կաս արքոռոյ վեհ Դիսապէս.
Քաղցր ակնարկեալ ի Գան բոյին, տուր պաշազատ զոք եւզ հանգեւ.
Շող լուսոյն բորք ծագեսցի ի պաշտելին Իշման տեղի,
Եւ Ներսիսեան քի ոչ անուամբ՝ հոգւով տացի մեզ Հայրապէս:

Յայնժամ սուգ ի ցրնծութիւն դարձցի ազգիս բորգոմական,
Հօտ եւ հովիւք ըզբինդ տացեն խուռն ի գաւիթս սրբութեան
Երգնուլ գովս սրբանուէր հում յաջորդին արժանաւոր,
Կալ անասան ի բոյդ հաւատ, ի յոյս ու ի սէր եղբայրական:

Այս մեծահռչակ կաթողիկոսի արտաքին կենացն
ու գործոցը վերայ այսքան խօսելէն յետոյ, դառնամք
այժմ նորա ընտանեկան կենսագրութեանը:

Ներսէսը բնութեամբ բարեսիրտ, աշխատասէր, ծանր
եւ խօսքի տէր մարդ էր. իւր գլխաւոր գործերը անձամբ
կանէր, եւ ամէն բանի մէջ զարմանալի անվեհերութիւն
կցուցնէր:

Հասակը միջակ էր, մարմինը նիհար, աչքերը սեւ
ու վառվառն, դէմքը սուրբ ու պատկառելի, եւ իւր
ծանր ու մեղմ խօսակցութիւնը բնական ճարտասանու-
թեամբ զարգարուած:

Իրեն ասածն ու արածը լաւ հասկանալով եւ իւր
հայրապետական պարտաւորութիւնները անքուն գոր-
ծունէութեամբ կատարելով, չէր կարող համբերել եթէ
իւր կամքը, փափագն ու հրամանները ո՞ր եւ իցէ
պատճառով ուշացուին կատարուելու:

Հասարակաց բարւոյն եւ մասնաւորապէս Հայոց
ազգիս բարօրութեան վերայ ունեցած սէրն ու աշխա-
տանքը գերագոյն աստիճանի հասած էին:

Ո՛րքան որ իւրեանց պարտքն ու աստիճանը ճանաչող
եկեղեցականները վարձատրելու եւ քաջալերելու համար
առատ էր եւ յօծարափոյթ, նոյնքան եւս իւրեանց
կոչմանն անարժան հոգեւորականները պատժելու եւ
յանդիմանելու համար պատրաստի:

Ամէն մարդու խօսքի շուտով չէր հաւատար, բայց
եթէ քանի մի անգամ փորձելով ճշմարիտ ճանաչէր
զինքը, մեծ մտերմութեամբ ու սիրով կվարուէր հետը:

Իբրեւ Հայաստանցի՝ շատ հիւրասէր էր. եւ երբ
հեռաւոր տեղերէ Հայեր կերթային իրեն, ոչ միայն
սիրով կընդունէր զիրենք, այլ եւ վանքի պարսպին մէջ
առանձին սենեակ նշանակելով՝ կերակուր տալ կը-
պատուիրէր տնտեսին, եւ երբեմն եւս (ըստ արժա-
նաւորութեան անձին) սեղանակից կանէր իրեն:

Երբ ո՞ր եւ իցէ առաջնորդէ կամ Կոնստանտնուպոլսի
այնպիսի լուր առնուր՝ որոյ հետեւանքը ազգութեան
ամօթ եւ նախատինք կրնար բերել, զիշերներով քունը
չէր տաներ եւ խոր մտածութեանց մէջ կընկղմէր. այն
միջոցները սաստիկ նեղսիրտ կլինէր. բայց երբ իւր
մտերիմներէն մէկը քաղցրութեամբ հասկացընէր իրեն

որ իւր կենացը վնաս է այնքան մտածելը, իսկոյն իրեն արածը պակասութիւն ճանաչելով՝ « ես Հայ ազգի կենաց վիճակը կարգաւորեցի, կասէր ժպտելով, բայց իմ կենաց վիճակը դեռ չկարողացայ կարգաւորել »:

Սովորութիւն ունէր իւր սեպհական գրքերուն եւ ուրիշ բաներուն վերայ իւր ձեռքովը մակագրութիւն անել եւ ինչպէս կերելի նորերս գտնուած նորա մէկ պղնձէ կաղամարին (թանաքամանին) վերայ գրուած ոտանաւորէն, Ներսէս իւր մանկութեան ժամանակէն ունէր այդ սովորութիւնը: Կաղամարն այժմ իւր եղբորորդի Շահազիզեանց — Կամսարական Յարութիւն աղայի մօտն է, եւ վերան այս ոտանաւորս գրուած է.

ՆԵՐՍԷՍ ԴՊԻՐՍ ԱՇՏԱՐԱԿՅԻ,
ՀՈԳԵՒՈՐԴԻՍ ԳԱԼՈՒՍՏ ՊԵՏԻ,
ԱՌԻ ԱՐԴԵԱՄԲ ՄԱՐՄԵՈՅՍ ԾՆՈՂԻ
ԶԱՅՍ ԿԱՂԱՄԱՐՍ ՊԵՏԱՆԻ,
Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ԵՐԵՄԵՆՈԹԻՆ
ԵՐԿԱՐԻՐԵԱԿՆ ԸՆԴ ՀԱՋԱՐԻՆ (ՈՄԼԵ = 1788):

Վերջապէս կմնայ մեզ յաւելցընել, որ այս մեծագործ հայրապետին անուամբը՝ իրմէ զատ՝ չորս կաթողիկոսներ եղած են.

Առաջինը՝ Լուսաւորչի ցեղէն սուրբն Ներսէս Մեծ, որ մեր Արշակ Բ թագաւորին օրերը բոլոր նախարարաց հաւանութեամբը հայրապետական աթոռը նստաւ 364 թուականին, եւ ամենայն բարեկարգութեամբ Հայաստանը զարդարելէն ու քսան տարի ազգը կառավարելէն յետոյ 384-ին զոհ եղաւ մեր Պապ թագաւորի անիրաւ կամացը:

Երկրորդ Ներսէսը՝ Աշտարակեցի էր, որ 524-ին կաթողիկոս ընտրուեցաւ, ինը տարի ամենայն բարեմասնութեամբ պայծառացոյց Հայաստան եւ 533-ին վախճանեցաւ:

Երրորդը՝ որ ի սկզբան եպիսկոպոս էր Տայոց եւ կաթողիկոս ընտրուեցաւ 640 թուականին՝ Հայաստանի մէջ շատ վաճօրայք եւ եկեղեցիք կանգնելով՝ Ներսէս Շինող անուանեցաւ, եւ քսան տարի Լուսաւորչի աթոռը կառավարելէն յետոյ 660-ին մեռաւ:

Չորրորդ Ներսէսն էր Գրիգոր Պահլաւունց փոքրիկ եղբայրը, որ իւր ոգելից եւ ազգու գրուածոց համար Շնորհալի ասուեցաւ: Սա 1166-ին կաթողիկոս ընտրուելով՝ պայծառացոյց Հայաստան իւր շնորհազարդ, առաքինի եւ սուրբ վարքովը, եւ շատ կոնդակներ կամ ընդհանրական քրքեր գրեց եկեղեցականներուն եւ աշխարհականներուն, խորիմաստ շարականներ երգեց, ոտանաւոր բանիւք Հայոց հաւատոս պատմութիւնն ու Յիսուս որդի կոչուած ողբերգական եւ խրատական տաղաչափութիւնը գրեց, Մասթուսի աւեսարանին մեկնութիւնը շարադրեց եւ այլն, եւ 1173 թուականին իւր 75-ամեայ հասակին վախճանեցաւ, եօթը տարի եւ չորս ամիս ազգը կառավարելէն վերջը:

Բայց թէ այս Հինգերորդ Ներսիսին ինչ ածական տալու է որ վայելուչ լինի իւր մեծագործութեանցը. — սորա վերայ տակաւին խօսք չէ եղած, եւ կարծեմ լաւ կլինէր ՆԵՐՍԷՍ ՀԱՅՐԵՆՍԱՍԷՐ անուանել զինքը. վասն զի Հայոց պատմութեան տեղեկութիւն ունեցող անձինքը դիւրաւ կհասկանան որ այս ածականը միայն Արամայ տրուած է, որ հրաման տուաւ իւր իշխանութեան տակ գտնուող ազգերուն « Ուսանել զխօսս եւ զլեզուս հայկական » (1). ուստի եւ իրաւամբ կարելի է հայրենասէր անուանել նաեւ այս մեծագործ հայրապետը, առաջինը այն պատճառաւ որ տակաւին իւր առաջնորդութեան օրէն Վրաստանի եւ նորա շրջակայ

(1) Խորենացի, Գիրք Ա, Գլ. ԺԳ.

տեղերը եկեղեցական դպրոցներ բանալով՝ վաթսուհին հազար Հայ ժողովրդոց հայերէն խօսելուն պատճառ եղաւ, որ իրմէ յառաջ սովորաբար վրացերէն կ'իօսէին. եւ երկրորդը՝ որ քաղցր է անտարակոյս ամենայն Հայի, իւր անմահ ղիւցագին՝ դարերու հնութենէն գրեթէ մոռացուած անունը, թէ՛ նորա յաւիտենական փառացն արժանի Ներսիսի նման անձին երեւելովը վերածնել ու կենդանացընել, եւ թէ միանգամայն այս հայրապետական փառքով ու պատուով պսակուած վեղարին տակը փայլող հոգեւոր Արամայ յիշատակը՝ Հայաստանի երախտագէտ որդւոց սրտին մէջ ոսկեղէն տառերով դրոշմել (¹):

Յովհ. ՏԵՐ-ԱՅԵԱԶԱՐԵԱՆ.

(¹) Այս կենսագրութիւնը գրելու ժամանակ՝ ես այն երիտասարդին նմանեցայ, որ ձեռքը գոյնգոյն ծաղիկներ բռնած՝ պարտեզ կամենէ կանաչ տերեւներ փրցընելու. եւ իւր ծաղկանց շրջակայքը ղնելով՝ մեկ հաստատուն փունջ հիւսելու. վասն զի քեպտ իմ յատկապէս այս մասին այլ եւ այլ տեղերէ խնդրած եւ ընդունած նամակները բառական էին այս կենսագրութեանը, սակայն յօդուածս անելի ճիշդ կերպով աւանդելու համար՝ աչքիս առաջեւը պահեցի „Կովկաս“ անունով հայ եւ ռուս լրագրաց քանի մի բերբերը, Պ. Նովոսելովի ռուսերէն գրութեանը (1858), „Ճոաքաղ“ ամսագիրը (1860) եւ այլն:



Handwritten signature or mark.



Handwritten text, possibly a signature or date, in cursive script.

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL005132

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL005126

